

Բարձրագույն կրթության ֆինանսավորման միջազգային փորձը

Արթուր Հաուպտման

Բարձրագույն կրթության ֆինանսավորման

Սեմինար

Հայաստան

4, փետրվար 2011

Ռիտարկումների համառոտագիրը

- Կառավարման խնդիրների կարևորության գիտակցումը ԲԿ ֆինանսավորման քննարկումներում
- Միջազգային փորձի դիտարկում՝ ֆինանսավորման երկու տիպի մեխանիզմների համար.
 - Աջակցություն հաստատություններին
 - Աջակցություն ուսանողներին
- Հայաստանը համեմատությունն այլ երկրների հետ. ինչպես է այն ֆինանսավորում և կառավարում ԲԿ
- Որոշ մեխանիզմների ուժեղ և թույլ կողմերը՝ տարբեր երկրներում ԲԿ բարելավված մատչելիության, հավասարության, որակի, համապատասխանության և արդյունավետության նպատակներին հասնելու տեսանկյունից

Կառավարման խնդիրների կարևորությունը՝ ԲԿ ֆինանսավորման քննարկումներում

- Թեպետև հաճախ չի ընդունվում, այնուամենայնիվ Կառավարության, բուհերի և միջնորդ մարմինների միջև փոխհարաբերության գիտակցումը՝ ԲԿ սեկտորի ֆինանսավորումը հասկանալու անկյունաքարն է
- Կառավարության վերահսկման կամ ինստիտուցիոնալ ինքնավարության աստիճանը մի շարք լայն շրջանակի հարցերի շուրջ հաճախակի վճռում է արդյոք ք ֆինանսավորման մեխանիզմները կգործեն, թե ոչ

Լավ փոխհարաբերություններ Կառավարության, բուհերի և միջոցող մարմինների միջև

- Համաձայն միջազգային փորձի, լավ գործող ԲԿ սեկտորը պետք է ունենա հետևյալ բնութագիրը.
 - Կառավարությունը պետք է որոշի պետական ֆինանսավորման չափը տարբեր գործառույթների համար՝ ներառյալ ինստիտուցիոնալ աջակցությունը, ուսանողական ֆինանսական նպաստը և հետազոտության ֆինանսավորումը
 - Միջոցող մարմինները պետք է գլխավորապես պատասխանատու լինեն որոշելու թե ինչպես են պետական միջոցները հատկացվում բուհերին, ինչպես է որակը հավաստվում և ինչպես է ուսանողական ֆինանսական նպաստը հատկացվում
 - Բուհերը պետք է գլխավորապես պատասխանատվություն կրեն ուսումնական ծրագրերի և այլ ակադեմիական գործոնների մշակման, ինչպես նաև հաստատության որակի պահպանման և բարելավման համար

Ինչպիսին պետք է լինի ինստիտուցիոնալ կառավարման լավ համակարգը

- Բուհերը պետք է ունենան ինքնավարություն պետական միջոցները ծախսելու հարցում՝ պետության կողմից չարաշահումների դեմ միջոցների ձեռնարկման հետ մեկտեղ
- Բուհերը պետք է ապահովեն հաշվետվողականությունը, ստանալով հաջորդ տարվա պետական ֆինանսավորումը՝ տվյալ տարում կատարված ծախսերի արդյունքների հիման վրա
- Կառավարությունը կամ բուհերը պետք է սահմանեն վարձավճարները՝ ընտանիքների ֆինանսական կարողությունների և կրթության մասնավոր արժեքի շրջանակներում
- Անկախ այն փաստից, թե ով է սահմանում վարձավճարները՝ բուհերը պետք է իրավունք ունենան ծախսելու այդ միջոցները ինչպես որ հարկն են համարում

Միջազգային փորձ. աջակցություն բուհերին

- *Բուհերի ֆինանսավորման երեք մոդելներն են.*
 - Պետական բուհերի ֆինանսավորման ավանդական մոդել
 - Կառավարության կողմից սուբսիդավորում՝ վարձավճարները ցածր պահելու նպատակով; բավարար ինքնավարություն
 - Սուվետական ոճի մոդել
 - Կառավարության կողմից մեծ վերահսկողություն; զուգահեռ վարձավճարներ; փոքր ինքնավարություն
 - Շեշտադրումը մասնավոր սեկտորի բուհերի վրա
 - Ավելի բարձր վարձավճարներ; ավելի շատ մասնավոր տեղեր; առավել ինքնավարություն
 - Մասնավորապես կիրառվում է մեծացող պահանջարկը բավարարելու նպատակով, որը չեն կարող ապահովել պետական բուհերը

ԲԿ ֆինանսավորման ավանդական մոդելը

- Աշխարհի երկրների մեծամասնությունը հիմնվում է պետական բուհերի վրա՝ իրենց ուսանողների մեծամասնությանը կամ բոլորին կրթելու հարցում
- Այս մոդելի պարագայում պետությունը տրամադրում է զգալի սուբսիդավորում՝ վարձավճարները մեկ ուսանողի համար իրական ծախսերից ցածր պահելու նպատակով
- Պետությունները այս կերպ վարվելիս հավատում են, որ ԲԿ-ն հանրային սեփականություն է և օգտակար է՝ առավել կրթված հասարակություն ունենալու համար
- Այս մոդելի շրջանակներում, այնուամենայնիվ, երկրները տարբերվում են միմյանցից ուսանողների կողմից պետական բուհերին վճարվող վարձավճարների չափաքանակներով՝ արտացոլելով բազմաթիվ գործոններ

Ֆինանսավորման ավանդական մոդելի զարգացումը

- Պետական բուհերի ֆինանսավորումը կատարվում է նախորդ տարիների ֆինանսավորման ցուցանիշների հիման վրա
- Սկսած 1950-1960-ականներից երկրները և շրջանները սկսեցին բաշխել ֆինանսական միջոցները մեկ ուսանողի ծախսերի և ուսանողների թվաքանակի վրա հիմնված բանաձևի միջոցով
- Սկսած 1990-ականներից մինչև 2000-ականները աճում է այն երկրների թիվը, որոնք բաշխում են միջոցները կատարողականի վրա հիմնված բանաձևի միջոցով
 - Անգլիա, Դանիա, Իսրայել, ԱՄՆ մի քանի նահանգներ

ԲԿ Ֆինանսավորման սովետական ոճի մոդելը

- Պետությունը ունի ԲԿ սեկտորի վերահսկման բարձր մակարդակ՝ ներգրավվելով բոլոր խնդիրներին
- Դասավանդումն ու հետազոտությունը հաճախ իրականացվում են տարանջատված՝ բուհերում և հետազոտական հաստատություններում
- Զուգահեռ վարձավճարներ, երբ լավագույն ուսանողները չեն վճարում վարձավճարներ, մինչդեռ մնացածները վճարում են ամբողջությամբ
- Ինստիտուցիոնալ ինքնավարության ցածր աստիճան

Երրորդ մոդել- հիմնվել մասնավոր բուհերի վրա՝ ԲԿ ոլորտի զարգացման նպատակով

- Փոքր թվով երկրներ են վստահում մասնավոր բուհերին՝ բարձրագույն կրթության տեղերի մեծամասնությունը ապահովելու հարցում
 - Օրինակ՝ Կորեա և Ճապոնիա
- Սակայն բավականաչափ շատ երկրներ վստահում են նաև մասնավոր բուհերին՝ բարձրագույն կրթության զարգացումը խթանելու նպատակով, մասնավորապես համալսարանականից ցածր կրթության համար
 - Օրինակ՝ Հորդանան և մի շարք Ասիական երկրներ
- Վերոնշյալ երկու դեպքերում էլ տեսությունը նույնն է- մասնավոր բուհերի ուսանողներին ֆինանսական նպաստ տրամադրելը առավել քիչ ծախսատար է, քան պետական բուհերի ուսանողների կրթության ֆինանսավորումը

Միջազգային փորձ. Ուսանողների Ֆինանսավորման մոդելներ

- Երկրների մեծամասնությունում ուսանողների ֆինանսական աջակցությունը փոքր դեր է խաղացել ԲԿ ֆինանսավորման համակարգում
 - Պետական միջոցների մեծամասնությունը ուղղված է բուհերի աջակցությանը
- 1960-ականներին ԱՄՆ սկսեց ագրեսիվ քաղաքականություն՝ ուսանողներին դրամաշնորհներ և վարկեր տրամադրելու հարցում
- Մյուս երկրները սկսեցին նմանատիպ ագրեսիվ քաղաքականություն 1980-1990 –ականներին, սակայն ոչ այնքան, որքան ԱՄՆ-ն
- Երկրների մեծամասնությունում ուսանողական վարկերը դարձան ուսանողական ֆինանսական աջակցության առաջնային ձևերից մեկը

Դրամաշնորհներ և սոցիալական նպաստներ

- Երկրների մեծամասնությունը այսօր իրենց ուսանողներին տրամադրում են դրամաշնորհներ կամ սոցիալական նպաստներ
- Սակայն, դրամաշնորհներն ու սոցիալական նպաստները սովորաբար կազմում են պետական ֆինանսավորման փոքր մասը
- Երկրների մեծամասնությունում ուսանողական աջակցությունը տրամադրվում է սոցիալապես կարիքավոր խմբերին, թեպետև մի շարք երկրներում գնալով աճում է առաջադիմության համար տրվող աջակցությունը
- Դրամաշնորհների և նպաստների ֆինանսավորման և կառավարման մեխանիզմները տարբեր են՝ Պետությունը կամ բուհը

Ուսանողական վարկեր

- Ուսանողական վարկերի տրամադրումը դարձել է վերջին քառորդ դարում ԲԿ ֆինանսավորման ամենատարածված միտումներից մեկը
- Մոտ 100 երկիր արդեն տրամադրում են ուսանողական վարկեր, թեպետև էական հաջողություններ ունեն նրանցից միայն մոտ քսանը
- ՈւՎ-ի տրամադրման նմանատիպ աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետության համար ֆինանսապես առավել շահավետ է ֆինանսավորել ուսանողական վարկեր, քան աջակցել բուհերին կամ տրամադրել դրամաշնորհներ:

Ինչպե՞ս է Հայաստանի ԲԿ ֆինանսավորման համակարգը համեմատվում ոչ-սովետական երկրների հետ

- Պետական բուհերում շատ բարձր վարձավճարներ՝ ի համեմատ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի չափի
- Բուհերի ընդհանուր (հիմնական) ֆինանսավորման բացակայությունը արտասովոր է ոչ-սովետական երկրների համար
- Մեծ շեշտադրում առաջադիմության համար տրամադրվող ուսանողական նպաստներին
- Պետության կողմից բուհերի կապիտալ ծախսերի ֆինանսավորման բացակայությունը ընդունված չէ
- ՈւՎ-երի բացակայությունն արտասովոր է

Ֆինանսավորման տարբեր մեխանիզմների ուժեղ և թույլ կողմերը

- Պետական բուհերի ֆինանսավորում դասավանդման համար
- Վարձավճարների դերը ԲԿ ֆինանսավորման հարցում
- Կատարողականի վրա հիմնված ԲԿ ֆինանսավորման մոտեցումներ
- Մրցակցային հիմնադրամներ
- Դրամաշնորհներ և սոցիալական նպաստներ
- Ուսանողական վարկեր
- Որակի ապահովման դերը ԲԿ ֆինանսավորման մեջ